գլխաւորն՝ Կամենիցայ աւագերէցն Յովհաննէս՝[1] Թուի թէ մասնաւոր նկատմամբ չէ ուզած իմացընել՝ Մոլտաւայ քանի մի Վոյվոտայից հայ ըլլալը, մանաւանդ այն Աճգուր կամ Աճաւուր անուանեալ Յովհաննու, զոր ըստ սովորութեան Իւոն կոչեն. որ թէ և ի մօրէ միայն Հայ էր, բայց օտար պատմիչք յստակապէս Հայ մականուանեն զնա, ինչպէս և Աճաւուր, իր քաջութեանց և անխնայ վրիժառութեանց համար, որովք Ռումենիոյ քաղաքական պատմութեան մէջ՝ ամենէն անուանի անձանց մէկն համարուի, և միայն մատնութեամբ վատ մարդկան՝ զրկուեր է իր եռամեայ իշխանութենէն և ի կենաց. մեր Աւագերէցն յիշէ զայս՝ կարճ բայց լաւ ոճով, (յերես 44-5), սպանման օրն այլ նշանակելով՝ ի 20 մարտի, 1575, ըստ այլոց 1574: Աստ եղբարք համամարք և բնիկ Հայ հօր Սերբեկայի որդիք՝ Կարապետ կամ Իւոնն, Կոստանդին և Աղեքսանդր և սորա որդին Պետրոս եւս, ջանացեր և կարճ ատեն գրաւեր են վոյվոտական գահը, հալածելով զՄոլտաւ յափշտակողս. վերջի յիշեալ իշխող Պետրոսի բանուելու ատեն՝ Աշագ անուամբ Հայն այլ բըռնուեր և փախեր է, և այլն. (տ. եր. 59): Ռումենաց պատմութեան մէջ սոքա՝ Բոդքովա կոչուին, որ Պայտ (նալ) նշանակէ իրենց լեզուաւ, և համարին թէ թարգմանութիւն ըլլայ հայ Սերբեկա անուան կամ բառի. որ մեզ անծանօթ է[2]: Յիշէ և Իւոնի վոյվոտայութիւնը յամի 1577-8, և գլխատուիլն ի Լեհաց, (եր. 48-9.) և միւս եղբայրը, որ՝ յետ երկուց շաբաթուց «պարան մտաւ ի յերկիրն՝ Խաղախներումն, զոր ոմանք ասացին, եթէ այդ Բոդքովային եղբայրն է», և այլն, (եր. 49): Տասն տարի առաջ Պր. Գր. Պըլըզըեան՝ Հանդէս ամսօրեայ օրագրի մէջ (Թ. հտ. եր. 101-3.) այս Սերբեկեան Հայ վոյվոտայից վրայօք տեղեկութիւն գրած է. աւելի ընդարձակ՝ Ռումենաց պատմիչք, մանաւանդ հռչակաւորն Հաշտէու. և այս տարի (1896), զատ առջի գրածներէն՝ Քսենոփոլ, ընդարձակ երկհատոր Ռումենաց պատմութեան մէջ[3]: Այս կարեւոր գիրքս՝ շնորհիւ յիշեալ Պ. Գրիգորի հասաւ առ մեզ՝ նոր մամլէ ելած, բայց մեր այս գրոցս այլ տպագրութենէն վերջը, որով չկարցանք ըստ ժամանակին օգտուիլ և ծանօթաբանել: Սա՝ մեր ժամանակագրին պախարակած Տեսրոթը (եր. 19-28) աւելի արժանաւոր անձ մի ցուցընէ, որ և գրաւոր յիշատակ մի թողած է, Փռանկաց Ե Կարոլոսի պատերազմաց Պատմութիւնն, որ և տպագրուեր է: Բայց նկատմամբ մեր ազգի՝ քիչ գիտելիք կայ Քսենոփոլի այս գրոցս մէջ. ամենէն մեծ դիպուածը՝ Հայոց հալածանքն և վիշտքն

1. Իր որդւոյն՝ Ագսենտի՝ թաթարերէն գրածին մէջ այլ կան մանր յիշատակք ազգային, որոց մէջ նշանաւոր և վիպասանական դէպք մ'է 1616, մարտի 28ին. Հայ աղջկան մի ըրածը. կախուելու տարւող դատապարտելոյն (զուցէ սիրականին) յանկարծ դէմ գալով, և թեւէն քաշելով տանիլն և մէկ տեղ քաղքէն դուրս փախչիլն, (եր. 77):

2. Գուցէ բառին արմատն «Էրք» կամ «Արք»՝ դրաստուց ոտից նշանակութիւն ունենայ, զի ի գիրս (Կանոնական) գտած եմք զայս բառ, եթէ ձին կամ ջորին՝ «սարքէ և աքցի տայ»:

3. Histoire des Roumains... depuis les origines jusqu' à l'union des Principautés en 1859. par A. D. Xénopol. Paris, 1896.